




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2820
989-2

Պրոլետարներ բոլոր յերկրներէ, միացե՛ք.

Ս. ՏԱՐԱԿԱՆՈՎԱ

ԳԵՂՋԿՈՒՅԻ, ՄՏԻՐ ՄՈՊՐ-Ի ՇԱՐՔԵՐԸ

ՄՈՊՐ-Ի ՀԵՅԸՍՏԸՆԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՀՐԸՏ. № 7.

ՅԵՐԵՎԱՆ 1927


Պրիւտարները բոլոր յերկրներէ, միացե՛ք.

Ս. ՏԱՐԱԿԱՆՈՎԱ

327.321

Հոտ A I 4047

ԳԵՂԶԿՈՒՅԻ, ՄՏԻՐ
ՄՈՊՐ-Ի ՇԱՐՔԵՐԸ



ՄՈՊՐ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ. № 7

ՅԵՐԵՎԱՆ 1927

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1276.
ԳՐԱՌ. 909 Բ., ՏԻՐԱԺ 8000.

ԳԵՂՋԿՈՒՀԻ՝ ՄՏԻՐ ՄՈՊՐ-Ի ՇԱՐՔԵՐԸ

Տարեց-տարի աճում և ամրանում և խոր-
հուրդների հանրապետությունը:

Մահվան ատելություն են տածում դեպի
մեր բանվորագյուղացիական յերկիրը աշխա-
տավորների թշնամիները—ամբողջ աշխարհի
կալվածատերերն ու կապիտալիստները: Քնում
են և յերազ տեսնում—թե ինչպես վոչնչացնեն
իրենց ատելի խորհրդային իշխանությունը:

Բայց ախր ի՞նչ և պատճառը, վոր արտա-
սահմանի կալվածատերերը այդպես չեն սիրում
մեր խորհրդային իշխանությունը:

Ա՛յ, նրա համար, վոր այժմ գյուղացիներն
ազատ են ապրում, նրա համար, վոր կալվածա-
տերերն այժմ չեն կարող գյուղացու ամբողջ
արյուն-քրտինքը քամել:

Մեր գյուղացիները դեռ լավ հիշում են,
թե ինչպես էին ապրում ցարի ու կալվածա-
տերերի ժամանակ, իսկ իրենց հայրերի պատ-
մությունից նրանք զիտեն ճորտատիրության
մասին, յերբ կալվածատերերը թուղթ խա-
ղալով տանուլ էին տալիս, կամ շան լակոտ-

ների հետ փոխում էին գյուղացիներին ամբողջ
ընտանիքներ:

Գեղջկուհիներին կյանքը ավելի լավ չէր:
Բանաստեղծ Նեկրասովը, վոր ճորտատիրու-
թյան ժամանակ էր ապրում, իզուր չէ գրել,
ուսու գեղջկուհու մասին:

«Ռուս կինը դժբաղդ, յերեք ահուկի վի-
ճակ պիտի կրեր—վիճակ սոսկալի: Առաջին
այն էր—կին լինել ճորտի, յերկրորդ՝ նա մայր
էր ճորտ վորդիներին, յերրորդ—մինչ իր մահը
ճորտի խոնարհվեր:

Բայց գյուղացու յերկար համբերությունն
էլ վերջ ունեցավ: Թնդաց Փետրվարյան, և
ապա Հոկտեմբերյան հեղափոխությունը: Ցա-
րի գահը փչրվեց: Շահագործողների իշխանու-
թյունը վոչնչացած է:

Գյուղացին թափ է տվել, ուղղել իր հոս-
կու ուսերը: Ավելի ազատ է շնչում և գեղջ-
կուհին: Հոկտեմբերյան հեղափոխությունը
գեղջկուհուն հող, իրավունք ու պաշտպանու-
թյուն բերեց:

Մեր գեղջկուհին կանգնած է տղամարդուն
հավասար առաջին շարքերում խորհուրդների
հանրապետության աշխարհում: Բայց խոր-
հրդային պետությունը յերկրագնդի միայն
մեկ վեցերորդ մասն է կազմում: Մնացած

բոլոր յերկրներում կալվածատերերի ու կա-
պիտալիստների իշխանությունն է: Իսկ ինչ-
պես են ապրում այդ արտասահմանյան յերկր-
ներում գյուղացիներն ու գեղջկուհիները:

ՍԱՀՄԱՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄՆ ՅԵՂՈՂ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԸ

Ամբողջ աշխատավոր ժողովուրդը—բան-
վորն ու գյուղացին այնտեղ դժվարությամբ
են ապրում:

Բոլոր կապիտալիստական յերկրներում.—
Գերմանիայում, Ֆրանսիայում, մանավանդ
Լեհաստանում, Ռումինիայում և Բուլղարիա-
յում գյուղացին քայքայվում է տնտեսապես
և կորցնում իր հողը:

Գյուղացիությունը հեծում է ահագին
հարկերի ու տուրքերի ծանր բեռան տակ:
Վա՛յ նրան, ով տուրքը ժամանակին չի վճա-
րել. կտանեն նրա անասուններն ու կարասիքը
կամ կջարդեն ու բանտ կդցեն:

Ռումինիայում գյուղացիք չեն դիմանում
ծանր հարկերին. նրանք իրենց հողն ու անա-
սունները վաճառում են կուլակներին և յերկ-
րագործական բանվորներ են դառնում: Այս-
պիսի պայմաններում մի՞թե ավելի լավ ու
գեղեցիկ կլինի գեղջկուհու կյանքը:

Հրավառ արևի կիզիչ ճառագայթների տակ
գեղջկուհին իր ամուսնու, վորդու, յեղբոր
հետ, առավոտից մինչև իրիկուն մեջքը ծռած
աշխատում է կալվածատիրոջ դաշտերում: Իսկ
անքուն գիշերն անց է կացնում դառն մտած-
մունքներով՝ իր քաղցած յերեխաների մա-
սին... Բայց գեղջկուհին միայն կալվածատի-
րոջ համար չէ՝ աշխատում, նա դեռ իր ամուս-
նու ստրուկն էլ է: Պետության կողմից իրա-
վունքից ու պաշտպանությունից զուրկ, գեղջ-
կուհին ծանր աշխատանքի տակ ընկճված ու
ստրուկ քարչ է տալիս այնտեղ իր կյանքը:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Գյուղացիների համբերության բաժակը
մինչև պռունկները լիքն է: Կամ այստեղ, կամ
այնտեղ բռնկում է գյուղացիների ապստամ-
բություն՝ իրենց ճնշողների դեմ:

1924 թ. սեպտեմբերին Հարավային Բե-
սարաբիայի (վոր ուժով բռնագրավել է Ռու-
սիայի) գյուղացիությունը յեղաններով, գե-
րանդիններով ու կացիններով ծառացա՛յ բոյա-
րական թնդանոթներով ու գնդացիներով գին-
ված բանդաների դեմ:

Փոքրիկ Բուլղարիայում գյուղացիներն ու
բանվորները 1923 թվին ապստամբվեցին կալ-

վածատերերի ու կապիտալիստների իշխանու-
թյան դեմ:

Մանր ու միջակ գյուղացիության մի շարք
ապստամբություններ յեղան նաև Իտալիայում
և Հարավ-Սլավիայում: Ապստամբության
տարերային ակիքը, ինչպես փոթորիկի ժամա-
նակ կայծակը, բռնկում է Լեհաստանում, Հու-
նաստանում և Արևելքի գաղութներում—Չի-
նաստանում և Հնդկաստանում: Այդ պայքա-
րում հետ չեն մնում և գեղջկուհիները: Գյու-
ղացիական ապստամբության մի ականատես
պատմում է.

«Բեսարաբիայում կանայք հարձակման
եյին դիմում ռումինական կառավարության
ուժեղ զորամասերի դեմ—գերանդիններով, յե-
ղաններով և կացիններով: Դեռահաս աղջիկ-
ները գնդացիների կապարե կրակի տակ այս ու այն
կողմն էյին վազում և ընկնում հնձած ծաղկի
նման»: Նույնպիսի հերոսությամբ մասնակ-
ցում էյին գեղջկուհիները նաև բուլղարական
ապստամբությանը: Գեղջկուհին մահվան տ-
ետելություն է կրում նգովված թշնամիների
դեմ իր տանջված կրծքում, և իր յերեխանե-
րին սովորեցնում է—վճռական բռնության դեմ
ուղղել վոչ իր աշխատանքի յեղբայրների դեմ,
այլ ճնշողների ու բռնակալների:

Բուրժուազիան վախենում է գյուղացիական ապստամբություններից:

Նա ուզում է արյան հեղեղներով խեղդել գյուղացիական հաղթության ձգտումը: Կալվածատերերը հույս ունեն կախաղաններով, գնդակահարություններով, տանջանքներով ու բանտերով վախեցնել գյուղացիական մասսաներին...

Խնայել չկա՝, վոչ ծերերին, վոչ կանանց, վոչ փոքրիկ յերեխաներին: Բուլղարիայի բանտերում 4500 գյուղացիներ են տանջվում: Նրանցից 1000-ը մահվան են դատապարտված: Տասնյակներով կանայք մահապատիժ են ստացել իրենց հայրերի, ամուսինների և վորդուց հետո: Ռեվելում (Եստոնիա) սպանված է մի հեղափոխականի ամբողջ ընտանիքը, հայրը, պառավ մայրն ու յերեք աղջիկները:

«Գեղջկուհի բանվորուհիներին կախում էյին ու կտրտում կտոր-կտոր. վողոգում էյին կրակ ու յերկաթով դահճային Բուլղարիայի տանջարաններում. նրանց մարմինները շարտում էյին Դնեստրի ալիքների մեջ, վորոնք վողոգում էյին Բեսարաբիայի արյունոտ ափերը. նրանցից հարյուրավորներն ու հազարավորները թաղված են լեհական ծայրագավառ-

ների յեղբայրական գերեզմաններում, նրանց արյունով հազեցել են Բերլինի և Համբուրգի փողոցների հողն ու քարը»:^{*)}

Ռումինիայում, Լեհաստանում և Ֆինլանդիայում կանանց հատուկ տաժանակիր աշխատանքի բանտեր կան: Շատ տասնյակներով գեղջկուհիներ մինչև մահ տանջվել են այս բանտերում, հաշմանդամ են դարձել կամ խեղաբարվել:

Ապա նրանցից քանի՞սն են ցմահ տաժանակիր աշխատանքի դատապարտվել, կամ «անհայտ կորել», այսինքն ուղղակի կտոր-կտոր յեղել առանց դատի ու քննության:

Ի՞նչ է ՄՈՊՐ-Ի ՆՊԱՏԱԿԸ

Սպիտակ տերրորի սանձարձակ խրախճանքի հետևանքով սպանված են հարյուր հազարավոր բանվորներ ու գյուղացիներ, տասնյակ հազարավորներ փխում են կապիտալիստական բանտերում, հազարներով փախչում են արյունոտ դատաստանից:

Իսկ ո՞վ կարող է ասել, թե ինչքան վորր ու ընտանիք են մնացել, մի կտոր հացից զուրկ... Միայն Բուլղարիայում, ապստամ-

^{*)} «ՄՈՊՐ-Ի ճանապարհը» 1926 թ. № 5:

բուժյունը ճնշելուց հետո 9 հազար անապատ-
տան յերեխաներ մնացին:

ԱՅ, ԱՅՍՏԵՂ Ե, ՎՈՐ ՈՔՆՈՒԹՅԱՆ Ե ԳԱԼԻՍ ՄՈՊՐ-Ը

Նա իր շարքերում միացնում է միլիոնավոր
աշխատավորների և ասում է բոլոր մարտիկ-
ներին. «Քաջալերվեցե՛ք, դուք մենակ չե՛ք:
Ձեզ հետ են ամբողջ աշխարհի ճնշվածներն ու
թշվառները: Ինչքան ել շատ մարդկային
կյանքեր պահանջի պայքարը—հաղթությունը
աշխատավորներինն է՛»:

Կնչանակե, ՄՈՊՐ-ը, բարձր է պահում
հեղափոխականների մարտական տրամադյու-
թյունը: Բայց բուրժուազիան բանտերում սո-
վամահ է անում իր գերիներին: Նրանց պետք
է կերակրել, և վոչ միայն նրանց, այլ և նրանց
ընտանիքներին:

Դրա համար միջոցներ են հարկավոր
ՄՈՊՐ-ի անդամավճարները գնում են արտա-
սահման մարտիկներին—բանվորներին ու գյու-
ղացիներին ու նրանց ընտանիքներին ոգնու-
թյուն ցույց տալու: ՄՈՊՐ-ի ամեն մի անդա-
մը մի կոպեկ է տալիս, իսկ այդ կոպեկներից
միլիոններ են կազմվում: Այդ միլիոն ուսու-
թիները տասնյակ հազար բանվորների ու գյու-

ղացիների ու նրանց ընտանիքների կյանքն են
փրկում:

Այս է ՄՈՊՐ-ի ամբողջ ույթը:

ՄՈՊՐ-ը հատկապես ոգնություն է ցույց
տալիս յերեխաներին, արտասահմանում նրանց
համար մանկատներ բաց անելով: Այդ տնե-
րում սնունդ, հարմարություն ու փաղաքշանք
են ստանում այն հայրերի ու մայրերի յերե-
խաները, վորոնք ընկել են կռվում, զնդակա-
հարվել են, տանջվել կամ նստած են բանտում:

Հին մարտիկների տեղ աճում է նոր սե-
րունդը, վոր դաստիարակված է կալվածատե-
րերի տիրապետությունն ատելու վոգով:

ԻՆՉՊԵՍ Ե ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԳՅՈՈՒՂԱՑԻՈՒ- ԹՅՈՒՆԸ ՄՈՊՐ-ԻՆ

Մեր գյուղացիությունը գիտակցում է,
վոր ամբողջ աշխարհի աշխատավորների շահե-
րը մեկ է: Ուստի ԽՍՀՄ-ի գյուղացիական լայն
մասսաները ՄՈՊՐ-ի միջոցով աշխատում են
յեղբայրական ոգնություն ցույց տալ հեղա-
փոխական մարտիկներին և նրանց ընտանիք-
ներին:

Մեկ միլիոն գյուղացիներ ու գեղջկուհի-
ներ ՄՈՊՐ-ի անդամ են:

Մարտիկներին ոգնելու համար, Ռեկրայ-

ի իրայի, Ղըրմի և Ուրալի գյուղացիները հողի կտորներ են ջոկել, միասին մշակում են և բերքը հանձնում են կապիտալի բանտարկյալներին՝ ոգնելու:

Կիրգիզիայում գյուղացիք այն բանտի բանտարկյաների համար, վորի վրա շեֆու-թյուն են վերցրել իրենք, մի քանի անգամ անասունների ամբողջ հոտեր են նվիրել:

Դրանից ել ավելին, մի քանի գյուղերում գյուղացիք յեկեղեցու ունեցվածքը նվիրում են ՄՈՊՐ-ի ոգտին:

Գյուղացիներից յեա չե մնում գեղջկու-հին:

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՊՐ-ին

Գեղջկուհիները ուշագիւր հետեւում են Արեւմուտքի և Արեւելքի իրենց յեղբայրների ու քույրերի պայքարին և աշխատում են վոչ մի-այն խոսքով, այլ և գործով աջակցել ձերբա-կալված մարտիկներին և նրանց բնավեր ըն-տանիքներին:

Մեր Միության ամենահեռավոր անկյուն-ների, կանանց բազմաթիվ ժողովներում գեղջ-կուհիները հայտնում են, թե պատրաստ են

ոգնություն հասցնել միջազգային հեղափո-խությանը:

Միացյալ շարքերով նրանք ՄՈՊՐ-ի ան-դամ են գրվում: Մի քանի կազմակերպու-թյուններում, որինակ Վյոտկայի նահանգում, գեղջկուհիները ՄՈՊՐ-ի բոլոր անդամների մի-յերրորդն են կազմում:

Բայց դա քիչ է. իրենց անձնվիրությունը միջազգային հեղափոխության և բանտարկյալ-ների մասին, իրենց հոգատարությունը, նրանք ուզում են գործով ցույց տալ:

Այսպես, ՄՈՊՐ-ի Կիյեվի նահանգական բաժինը գյուղացիներից ու գեղջկուհիներից նվերներ և ստացել Սեդլեցի և Լվովի բանտե-րի քաղաքական բանտարկյալների համար: Նվերների մեջ կան—սպիտակեղեն, թաշկի-նակներ, սրբիչներ, վորոնց վրա ուկրայներեն կարված են (թելերով գործած են) «Կուվեցեք—ամբողջ աշխարհի աշխատավորները իրար հետ միանալով միայն, նոր կյանքի կհասնեն»:

Շագրինսկի շրջանում Վ. Պալեվսկայա գեղջկուհին մի գեսյատին ցորեն և ցանել, վորի բերքը կգնա քաղաքական բանտարկյալ-ներին ոգնելու:

Մի ուրիշ գյուղում, գեղջկուհիները մի

որում 8 ու. 38 կ. են հավաքել իրենց շեֆարի-
յալ բանտն ուղարկելու համար:

Թե գեղջկուհին ինչքան գիտակից վերա-
բերմունք ունի աշխատավորներին միջազգային
պայքարին, յերևում է մի գեղջկուհու քաղա-
ական բանտարկյալներին գրած նամակից:

Ահա այդ նամակը:

«Թանգագին ընկերներ: Յես մի
տգետ, խավար գեղջկուհի, համակրում
եմ ձեր վշտին. տղամարդ կացեք մինչև
վերջը. գուցե ձեր համբերությանը շու-
տով վերջ լինի: Գուցե դուք գիտեք թե
հեղափոխությունը ինչ է բերել մեզ հա-
մար—ինչքան յերջանկություն, ինչքան
հաղթություն—իսկ դուք թշվառներ,
տանջվում եք. և վո՞րտեղ—ծանր է նույն-
իսկ մտածել: Ինչ վոր պատերի մեջ,
գուցե ծանր շղթաներով կապված: Բայց
ախար ինչո՞ւ համար, դուք տարիներով
անցնում եք այդ ծանր ճանապարհներով:
Ճշմարտության, այո', իսկապես ճշմար-
տության համար: Դժվար էր մեր առաջ-
նորդների համար բանալ ճշմարտությու-
նը, և դրանցից այդ խեղճերից շատերն ըն-
կան: Մեռավ մեր ամենաթանգագին ա-
ռաջնորդը—Վյադիմիր Իլիչ Լենինը. նա

մեր հայրն էր. նա տեսավ մեր դառն առ-
տասուքը, նա մեզ համար իր կյանքը
չխնայեց ու մեռավ—մեզ վորք թողեց:
Մենք ցավում ենք նրա համար, բայց նա
մեզ համար թողեց իրեն գործերն ու իրեն
կուսակցությունը, վորն աշխատում է մեզ
մոտ անդադար ու միշտ: Մեր ամբողջ
կյանքը շատ լավ կարգն է ընկնում: Վոչ
վոքի ձեռք չենք տալիս, իսկ կապիտա-
լիստները մեզ չեն կարող կործանել:
Պինդ կ'կանգնեք մինչև վերջը, դուք էլ,
ընկերներ, մի հուսահատվեք, գուցե շու-
տով կբանան ձեր բանտի դռները: Յերե-
վա կայել չի կարելի, թե ինչքան կուրա-
խանանք մենք»:

Ի՞նչպիսի խորը հավատ կա գեղջկուհու
այս պարզ նամակում, վոր միջազգային հեղա-
փոխության հաղթանակը անխուսափելի յե:
Ինչպիսի՞ թարմություն կմտցնի այս նամակի
մարտիկների տանջված սրտերը:

Անհրաժեշտ է, վոր մեր մեծ յերկրի բոլոր
գեղջկուհիները հետևեն այս գեղջկուհու որի-
նակին:


Միջազգային կապիտալի դեմ պայքարն
աճում է: Դեռ շատ զոհեր կընկնեն վարձու-
ավադակների ու դահիճների ձեռքով...

Յեւ Սրեմուտքի ու Սրեւելքի յերկրների
աշխատավորների համար այդ անասելի ծանր
բոպեյին, Խորհրդային Միության մեջ, պետք
է ավելի ուժգին հնչի այս կոչը. գեղջկուհի-
նե՛ր, համարձակ մտե՛ք ՄՈՊՐ-ի շարքերը:
Ուժեղացրե՛ք ձեր ոգնությունը կապիտալի
բանտարկյալներին: Հոգացե՛ք նրանց անտեյ
մնացած յերեխաների մասին:

Ամենալավ պսակը մեզնից հեռացած ա-
ռաջնորդի, ընկ. Լենինի գերեզմանի վրա—դա-
կապիտալիստական տանջարաններում տառա-
պող մարտիկներին ոգնելն է:

Գեղջկուհիներ, մտե՛ք Մոմբ-ի շաբաթը :

A $\frac{I}{4042}$



ՄՈՊՐ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՀՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ


1. Հսեք կոմյերիտականներ 55 եջ 20 կոպ.
2. Ա. ՄԱՐՏԻ. Ֆրանսիական Հանրա-
պետության բանտերում 73 եջ 30 կոպ.
3. Ի՞նչ ե ՄՈՊՐ-ը 18 եջ 15 կոպ.
4. ՄԱՐՏԻՆՈՎ. ՄՈՊՐ-ը և
շեֆությունը 16 եջ 5 կոպ.
5. ԳՈՐՆԵՎ. Ի՞նչ պետք ե գիտենա-
ամեն մի գյուղացի 12 եջ 5 կոպ.
6. ԳԵՅԼԵՐ. Ո՞ւմ և ի՞նչպես ե
ոգնում ՄՈՊՐ-ը 14 եջ 5 կոպ.
7. ՏԱՐԱԿԱՆՈՎԱ. Գեղջկուհի մտիր
ՄՈՊՐ-ի շարքերը 16 եջ 5 կոպ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

1. ՄԵՆԿՈՎ. Ինչպես են ապրում գյուղացիները կապիտալիստական չերկրներում.
2. ԳԵՅԼԵՐ. ՄՈՊՐ-ը խորհրդային Միության մեջ.

Պատվերները ուղղել Մ Ո Պ Բ-ի Հաճախատանի կենտրոնական կոմիտե

Արդվյան փող. հո. 34 (հեռախոս հո. 309)



[044]

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

A $\frac{I}{4047}$

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038294